ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՍԵՓԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՄԲ ԱՏԵՍՏԱՎՈՐՎԱԾ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻՆ ՀԱՎԵԼԱՎՃԱՐՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ ԹԻՎ ՎՁՄ-09.06.01.28-1

Ք.Եղեգնաձոր 03.12.2021թ

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանը, ի դեմս Գլխավոր քարտուղար Ա.Կարապետյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա, այսուհետ (Պետական մարմին), մի կողմից և Հերհերի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ը՝ ի դեմս տնօրեն Ե. Ոսկանյանի, որը գործում է ՊՈԱԿ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ (Կազմակերպություն), մյուս կողմից, այսուհետ միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի նոյեմբերի 5-ի <<Սեփական նախաձեռնությամբ /կամավոր/ ատեստավորման արդյունքում ատեստավորում անցած և հավելավճար ստացող ուսուցիչների մասին>> թիվ 1687-Ն հրամանը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 18 11.2021թ թիվ 1908-Ն որոշմամբ՝ կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1.Պայմանագրի առարկան

1. 1.1 Պետական մարմինը պարտավորվում է ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի 09.06.01 «28. Ատեստավորման նոր համակարգի ներդրում՝ ուղղված ուսուցիչների որակի բարձրացմանը» ծրագրի իրականացման համար սույն պայմանագրի 2.1. կետում նշված միջոցները հատկացնել Կազմակերպությանը, իսկ Կազմակերպությունը ստանձնում պարտավորություն 2021 թվականի ընթացքում իրականացնել թվով 2 կամավոր ատեստավորված մանկավարժների հավելավճարների տրամադրումը՝ (այսուհետև՝ Աշխատանք)

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

2.1. Սույն պայմանագրով կատարված Աշխատանքի ընդհանուր գինը կազմում է 174825 (Մեկ հարյուր յոթանասունչորս հազար ութ հարյուր քսանհինգ) ՀՀ դրամ:

2.2. Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո Պետական մարմինը սույն պայմանագրի 1.1 կետում նշված գումարը փոխանցում է Կազմակերպության գանձապետական հաշվին՝ համաձայն հավելվածի:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒ-ՆՆԵՐԸ

3.1. Սույն պայմանագրի 2.1 կետում նշված միջոցները պետք է ծախսվեն բացառապես սույն պայմանագրի 1.1 կետում նշված նպատակներին համապատասխան:

3.2 Կազմակերպությունը պետք է հաշվապահական փաստաթղթերը վարի օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան և ապահովի սույն պայմանագրի 1.1 կետով նախատեսված նպատակների իրականացման հետ կապված փաստաթղթերին ծանոթանալու՝ Պետական մարմնի ներկայացուցչի հնարավորությունը:

3.3. Հաշվետվությունը ներկայացվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.4. Կազմակերպության կողմից ստացված և սահմանված ժամկետներում չօգտագործված միջոցները վերադարձվում է Պետական մարմնին:

3.5 Կազմակերպությունը պարտավոր է յուրաքանչյուր եռամսյակ ներկայացնել հաշվետվություններ համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 2013 թվականի փետրվարի 4-ի թիվ 104-Ն հրամանի և ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվող կազմակերպություններին առընչվող այլ իրավական ակտերի: Կողմերի պատասխանատվությունը

4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1. Սույն պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է Պետական մարմնին փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Պետական մարմինը սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

5.ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5.1 Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը:

5.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն ողմերի համաձայնությամբ, որը կնքվում է գրավոր:
5.3 Սույն պայմանագիրը կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

5.ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Վայոց Ձորի մարզպետարան
ՖԻՆ գործ վարչ
ՀՎՀՀ 08907717
ՀՀ 900351001160
Գլխավոր քարտուղար
Ա. Կարապետյան_____
/ստորագրություն/

ԿԱՏԱՐՈՂ
Հերհերի միջն. Դպրոց ՊՈԱԿ
Վայոց ձորի մարզ գ. Հերհեր
Հ/Հ 900348000127
ՀՎՀՀ 09101721
Տնօրեն՝
_____Ե. Ոսկանյան
/ ստորագրություն/

Հավելված
06 դեկտեմբերի 2021թ
ՎՁՄ-09.06.01.28-1 պայմանագրի

Հ/Հ	Անուն ,Ազգանուն,Հայրանուն	Հրամանի ամիս,ամսաթիվ և համարը	Առարկայի անվանումը	Ընդամեն գումարը/ հազ դրամ/
1	Բաղդասարյան Նաիրի Նորայուսի	ՀՀ կրթության ,գիտության,մշակույթի և սպորտիի նախարարի 2021թ նեյեմբերի 5-ի N 1687 -Ա հրաման	Հայոց լեզու	80,325
2	Հակոբյան Աստղիկ Վարդանի	ՀՀ կրթության ,գիտության,մշակույթի և սպորտիի նախարարի 2021թ նեյեմբերի 5-ի N 1687 -Ա հրաման	Հայոց լեզու	94,500
	Ընդամենը			174825

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Վայոց Ձորի մարզպետարան
ՖԻՆ գործ վարչ
ՀՎՀՀ 08907717
ՀՀ 900351001160
Գլխավոր քարտուղար
Ա. Կարապետյան _____
/ստորագրություն/

ԿԱՏԱՐՈՂ
Հերհերի միջն. Դպրոց ՊՈԱԿ
Վայոց ձորի մարզ գ. Հերհեր
Հ/Հ 900348000127
ՀՎՀՀ 09101721
Տնօրեն
_____ Ե.Մանվելյան
/ստորագրություն/